Աւելի ուշ Սուրբ Մարիանէն վերածուել է ծխական եկեղեցու: Աշտարակցի Գէորգ Փարպիանեանը «փոքրիկ զանգակատուն» է կառուցել 1839ին՝ Նոյն շրջանում եկեղեցու արեւմտեան կողմում կառուցուել է «ժողովրդաւանդ»: 20րդ դարու սկզբին աշտարակցիները որոշել են վերջինիս տեղում կառուցել մի նոր եկեղեցի, որի համար արեւելեան կողմում գտնուող հին եկեղեցին պիտի ծառայէր իբրեւ սեղան և դաս, բայց չեն կարողացել գործը աւարտին հասցնել:

Ճարտարապետական առումով Սուրբ Մարիանէն արտաքուստ ուղղանկյուն (11,45 x 8,90 մ.), ներքուստ խաչաձեւ՝ արեւելեան կողմում երկու կրկնալարկ աւանդատներով, բարձրադիր գմբէթով, դարչնագոյն տուֆից կառուցուած եկեղեցի է: Ունի երկու մուտք՝ արեւմուտքից և հարաւից, յարդարանքն ընդհանուր առմամբ պարզ է: Կառույցն աչքի է ընկնում վերասլացութեամբ, որը շէտուում է ներքուստ գլանաձեւ, արտաքուստ՝ տասնիստ թմբուկ և երկնայալց վեղար ունեցող գմբէթի միջոցով:

«ԱՅ ԱՐՈՒՅՍ»

ՄԵՍՐՈՊԵԱՆ ՆԱԿԻՆ ՍԱՆԵՐՈՒ ՄԻՈՒԹԻՒՆ ԸՆԿԵՐԱՅԻՆ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԲ ԴԱՇՏԱԳՆԱՅՈՒԹԻՒՆ ԴԵՊԻ ԱՅՆ ՊԱՐՈՒՔ Մայրիներու անտառ, Ռաշիտ Նախլի տուն - քանգարան Կիրակի, 3 Օգոստոս 2003, Ճաշ և նուագ՝ Ժենըր Պարուք ձաշարանի մէջ Դիմել Մեսրոպեանի քարտուղարութեան, հեռ. 01-260504 կամ 03-569861:



տարապետական նշանաւոր համալիրը՝ քաղկապած եկեղեցական, աշխարհիկ յուշարձաններից: Այստեղ գերիշխող Ս. Գրիգոր եկեղեցին պատկանում է 6-7րդ դդ. Հայաստանում ստեղծուած

«ԱՉԳԱԿ»Ի ՄԵՋ ԾԱՆՈՒՅՈՒՄԻ ՀԱՄԱՐ Բոլոր անոնք, որոնք կը փափաքին «Ազգակ»ի մէջ որեւէ ծանուցում հրատարակել, պէտք է բնագիրը իմ քաղաքում՝ ծանուցումներու բաժանումը հասցնեն հրատարակման թուականէն առնուազն օր մը առաջ, ՄԻՆՉԵԻ ԵՐԵՎԱՆԻ ԺԱՄԱՐ 5:00: ՄԱՀԱՉԳԻՆԵՐԸ բացառութիւն են: Մահագր կ'ընդունուի մինչեւ ուշ գիշեր, այնքան ատեն որ զայն հրատարակելու հնարաւորութիւն կայ:

Միևերկրյա Երկրային Կրթություն

ՌԻՍԱՄԱ ՊԵՆ ԼՍԵՆ ԿԸ ՀԱՆԳԻՊԻ «ՌԻԻԼ ԷՆՏ ԿՐԷՅՍ»Ի

ՀԱՄԱՅԱՆՑԻ «ԼԻՒՈՂՈՒԷԼ» ԿԱՅԵՒՆ ՄԵՋ ԿԵՐԻ ՆՈՐԹ ԿԸ ԴՐՍԵՒՈՐԵ ԱՄԵՐԻԿԱՅԻ ՄԵՋ ԲՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ԱՋ ԹԵՒԻ ՄՏԱՆՈՂՈՒԹԻՒՆԸ՝ ԳՐԵԼՈՎ, ԹԵ ԻՍԼԱՄԱԿԱՆ ԱՃԻԱՐԸ ԱՆՁՈՐ Է ԱՄԵՐԻԿԵԱՆ ՄՃԱԿՈՅԹԻ ԹԱՓԱՆՑՈՒՄԻՆ ԴԻՄԱՑ, ԵՒ ԻՆՔԵՆԱՊԱՇՏՊԱՆՈՒԹԵԱՆ ԻՐ ԿԵՐՁԻՆ ԿՈՒԻԸ ԿԸ ՄՈՒՆ՝ ԿԵՐՁՆԱԿԱՆԱՊԵՍ ԱՆՁԱՏՈՐ ԸԼԼԱԼԷ ԱՈԱՋ

Պարզապէս պատկերասփիւռի յայտագիր մը դիտեցի 14 Յունիսին: Անիկա գիտ մղած է վերար- ժեւորելու Արեւմուտքի եւ Ուսամա Պըն Լատէ- նի օրակարգերը: Յայտագիրը վաւերագրական ժապաւէն մըն էր՝ «էյ. էմ. Սի. Ի» ծրագրերը, Հո- լիվուտ եւ իսլամական աշխարհը՝ վերնագրով: «էյ. էմ. Սի.» ամերիկեան դասական ժապա- լէններու պատկերասփիւռի կայան մըն է, որ կը սփռուի արբանեակներու միջոցով:

Վաւերագրական ժապաւէնը սկսաւ Միջին Արեւելքէն նկարներով: Մզկիթի մը մինարէթին ետին կը տեսնուէին արբանեակային երկու ալե- ճաւաքներ: Ապա հետեւեալ բառերը թաւալեցան պատաստին երկայնքին:

«Միջին Արեւելքի մէջ արբանեակային ոչ մէկ կայան կար 1990ին: Այսօր աւելի քան 100 կայան- ներ կան»:

Ապա՝ «Եգիպտացի մը ամիսը 12 տուարի կրնայ դիտել 70 կայան»:

Ապա՝ «պետութիւններ չեն կրնար հակակշիռ բանեցնել այս կայաններուն վրայ»:

«Ուել Էնտ Կրէյս», «Յրէնտ», «Մէքս Էնտ տը սիթի»- այս ամբողջ յայտագիրները ներկայ են, ինչպէս նաեւ՝ բոլոր միասնականութիւնը, չափանական դաւաճանութիւնը, եւ պոնկու- թիւնը, զորս ամերիկացիք խնդուքով կը դիմա- տորեն, եւ որոնք խնդուք կը պատճառեն նաեւ տասնեակ միլիոնաւոր իսլամներու:

Վաւերագրական ժապաւէնը 50 վայրկեան տեւողութեամբ մեզ պատցուց Միջին Արեւելքի պատկերասփիւռի կայաններուն մէջը: Տեսանք անուանի դէմքեր հիւրընկալող եգիպտացի կին մը, որ կը նմանէր ճիւղ մեր հիւրընկալողներուն, իր զոյղի մազերէն մինչեւ մութ արմատները:

Տեսանք վիտէոյի վաճառատուն մը, որ լեցուն էր ամերիկեան ժապաւէններով: Լեցնիք հարցազը- րոյց մը իսլամ ուսանողի մը հետ, որ իր կրօնը չէր կիրարկեր եւ Միացեալ Նահանգներու մէջ քոլէճ յաճախած էր, ապա Լիբանան գացած էր եւ արբանեակային կայան մը հաստատած էր: Ան ըսաւ, թէ միասնականութիւնն ու ամուսնա- կան դաւաճանութիւնը մաս կը կազմէին այն ար- ժէքներուն, զորս Ամերիկա կը բերէր արաբական աշխարհ: Նաեւ լսեցինք Պէյրութի Ամերիկեան համալսարանին մէջ դասախօս մը, որ երեւոյթը նկարագրեց իրեն Ամերիկեան ապակայնութիւն:

Բացայայտ դարձաւ, որ արբանեակային ցան- ցերը հարց մը կը դիմագրաւէին: Անոնք պէտք էր պատկերասփիւռի օրակայն 24 ժամ եւ շաբա- թը 7 օր: Իսկ ուրիշ՝ պիտի գտնէին ժամանցի յայ- տագիրներ՝ իրենց ժամանակը լեցնելու համար: Պատասխանը պարզ է. Հոլիվուտէն:

Հետեւաբար ամերիկեան մշակութային ար- շաւը, որ գայրոյթ կը պատճառէ Ֆրանսացիներուն երկու տասնամեակէ ի վեր, այժմ հասած է Միջին Արեւելք եւ պիտի չհեռանայ: Շատ մեծ գուժարներ կապուած են անոր:

Հարցազրոյցները վարողը այցելեց Գահիրէի վիտէոյի մէկ վաճառատունը եւ պատանիներուն հարց տուաւ, թէ իրենց նախասիրած ամերիկա- ցի դերասանը ո՞վ էր: Անոնք պատասխանեցին՝ Ալի Կիպսըն, թէ եւ Անուտլա ալ յիշուեցաւ:

Բոլորը, որոնք հետ հարցազրոյցներ կատար- ւեցան, նոյն բանը ըսին. ամերիկեան մշակոյ- թի ներկայութիւնը այժմ համարտած է: Անոնք բոլորն ալ փառաբանեցին ամերիկեան արհես- տագիտութիւնը՝ ժապաւէններ եւ պատկերաս- փիւռի յայտագիրներ պատրաստելու մէջը: Սա- կայն մեծամասնութիւնը մտահոգ էր: Միջին խաւի մանուկները հասակ կը նետեն ամերիկեան նիւթականացած կենցաղի արժէքներուն, որոնք դաւանումով, այնպէս ինչպէս ռեւէ պատանի՝ Նիւ Եորքի մէջը: Անոնք կ'ուզեն Ամերիկա գալ:

Մէկը բացատրեց այն, ինչ որ յեղափոխական շարժումի մը մաս կազմող ռեւէ ուսանող պիտի ըսէր. արմատականները բրտութեան կը դիմեն մշակութային այս արշաւին պատճառով: «Ըսել կ'ուզէք, թէ Ամերիկա՞ն պատճառ կը դառնայ, որ իսլամները բրտութեան դիմեն», հարց տուաւ զրուցալուրը: «Այո՛, - պատասխանեց անձը, - ճիշդ այդ է, որ կ'ըսեմ»: Ամերիկեան մշակոյթի սկսած է գրաւել Միջին Արեւելքը, եւ արմատա- կանները սկսած են դիմել իսլամութեան ծայրա- յեղ ձեւերու՝ իրենց մշակութային ինքնութիւնը պահպանելու համար: Դոկտորայի տիտղոսի հարկ չկայ ստիկա տեսնելու համար: Այս եղած է դիմադրութեան բիրտ շարժումներու պատ- մութիւնը հազարաւոր տարիներէ ի վեր:

Ուսամա Պըն Լատէն կը կորսնցնէ առիթը: Վիտէոյի այդ վաճառատան մէջ պատանիներ յստակօրէն կ'ըսէին, թէ կը հեռանային իսլամու- թեան աւանդական արժէքներէն եւ հանդերձան- քէն: Աշխարհի տարածքին 40 տարեկանէն վար մարդիկը ճիշդ եւ մարզակօշիկներ կը հագնին:

«էյ. էմ. Սի.»-ի վաւերագրական ժապաւէնին ծանուցումը կ'ըսէր. «Միջին արբանեակային պատկերասփիւռի կայաններ եւ ժապաւէններ կը գրաւեն իսլամներուն տունները Միջին Արեւելքի մէջը, շատեր երեւոյթը կը նկատեն ամերիկեան ներխուժում մը, որ վրդովուցնէ կը պատճառէ եւ՝ բացայայտ քարոզութիւն մը, որ կը միտի խորտակել իրենց գոծանակ եւ մշակութային ինքնութիւնը: «Ուել Էնտ Կրէյս»-ի բացայայտ միասնականութիւնէն մինչեւ, չափազանցուած վայրագ տեսարաններով ժապաւէնները կը պատկերեն արժէքներու դրոշմի մը, որ ինչ- պէս պատկերասփիւռի կայանի մը մէջ աշխատող եգիպտացի մը ըսաւ, կրնայ «ցնցում, մերժում եւ ատելութիւն» ստեղծել: Այսուհանդերձ բազ- մաթիւ իսլամներ չեն կրնար իրենց աչքերը հե-

ռացնել այս տեսարաններէն, որովհետեւ անկա- րելի դարձած է զանոնք անտեսելը: Քրիստոստա- նի մէջ աշակերտներ կ'ընեն, թէ ամերիկեան ժա- պաւէնները կը պատկերեն մարդիկ, որոնք ար- տայայտուելու եւ ընտրելու աւելի լայն ազատու- թիւն ունին: «Մեր երիտասարդները համակուած են այս արտադրութիւններով եւ հաճոյք կը զգան զանոնք կուլ տալով: Անոնք նաեւ կ'ընդօ- ռինակեն իրենց տեսածը», կ'ըսէ Գահիրէի մէջ «Իսլամ օնլայն» կայքին խմբագիրը:

Իսլամ քննադատներ կը գերազանհատեն իս- լամութեան կարեւորութիւնը Հոլիվուտի մէջը: Հոլիվուտի բացայայտ քարոզչութեան նպա- տակն է խորտակել Ամերիկայի կրօնական եւ մշակութային ինքնութիւնը: Իսլամութիւնը խորտակելը պարզապէս աւանդութիւններու դէմ պայքարին երեւցող բաժինն է:

Միջին Արեւելքի իսլամներուն դիտած պատ- կերասփիւռի ժապաւէնները կը դիտուին նաեւ Ամերիկայի մեթոտականներուն կողմէ: Իսլամ կրօնաւորներ նոյնքան զայրացած են, որքան՝ Տոն Ուայլտմէն, եւ նոյն պատճառներով: Ամե- րիկայի ցոփութիւնն է, որ կը վաճառուի պատ- կերասփիւռէն:

Վաւերագրական ժապաւէնին մէջ իսլամները իրենց նախասիրած ժապաւէնը կը համարէին «Պրէյվհարթ»ը: Ասիկա լաւագոյն բանն էր, որ տեսայ: Կարգ մը պատգամներ աւելի դիւրին կը կտորեն սահմանները: Պիտի ուզէի, որ այս ժա- պաւէնին պատգամը բազմաթիւ սահմաններ կտրէր, սկսեալ՝ Ուաշինկթոնէն:

Ամերիկեան ժամանցը անդիմադրելի է: Ար- բանեակային ցանցերը, վիտէոն, «Տի. Վի. Տի.»-ն եւ համացանցը սահմաններ չեն ճանչնար: Անոնք կը ճանչնան միայն շահ եւ վնաս: Մինչ արհես- տագիտական արտադրութիւնները հետզհետէ կ'աժտանան, անոնք կը թափանցեն տնտեսապէս ամէնէն աղքատ եւեւերուն մէջ, թաքստոցներ պայթեցնող ուժերու պէս: Մշակոյթը ծրար- ւած կարգադրութիւն է:

Ակներեւ է, որ Ուսամա Պըն Լատէն տակա- լին գինուորապահները պիտի գտնէ: Ասիկա պաւնդական իսլամութեան վերջին ուսման- կանն է: Իսլամական իշխանութիւններ 1400 տարիէ ի վեր կարողացած են իրենց սահմաննե-

րը փակել Արեւմուտքի դիմաց, երբ իրենք չէին կտրէր այդ սահմանները իրենց ձիւրով: Անոնք կրնային տարածուել եւ շրջափակել իրենց գրա- ւած երկիրը: Միակ երկիրը, որ անձնատուր եղած է իսլամութեան՝ Սպանիան է, որ 750 տարի դի- մադրած է անկէ ետք, եւ՝ Յունաստանը, որ պա- տերազմի դիմաց, երբ Օսմանեան կայսրութիւնը կը քայքայուէր:

Սակայն ներկայիս երկիրներու միջեւ սահ- մանները կը վերանան: Իսլամներ կ'արշաւեն դէ- պի Եւրոպա: Մինչ այդ Ամերիկան իր մշակոյ- թով, պատկերասփիւռի ժապաւէններով եւ հա- մացանցով կ'արշաւէ դէպի իսլամական աշ- խարհ: Երկու կողմերն ալ ստիպուած են յանձնը- լիլ՝ մշակութային առումով: Եւրոպացիք սկսած են անհետանալ՝ ծնունդի ցած համեմա- տութիւններու պատճառով, իսկ իսլամներ իրենց հակակշիռը կը կորսնցնեն իրենց ժողո- վուրդին վրայ, որովհետեւ Արեւմուտքի նիւթա- պաշտութիւնը սկսած է արմատ արձակել Միջին Արեւելքի մէջը:

Քրիստոնեաներու վերջին երկու սերունդնե- րը կը պայքարեն զանգուածային ժամանցի բա- րոյական ապակայնութեան դէմ: Հոլիվուտ կը յայտարարէ՝ «դիմադրութիւնը ապարդիւն է»: Սակայն ժամանակի ընթացքին դիմադրականու- թիւն մը ստեղծուած է: Անիկա ծնունդ առած է քրիստոնէական համայնքին մէջը: Քրիստոնէա- կան դպրոցներ պաշտպանութեան առաջին գի- ծին վրայ կը գտնուին: Նոյնպէս բացայայտ դար- ձած են սեռային փոխանցիկ հիւանդութիւննե- րու հետեւանքները: Այս հիւանդութիւնները կը ճանչնան միայն մէկ սահման. միակնութիւն: Ափրիկեան հեթանոս ենթասահարան սկսած է անհետանալ: Այսուհանդերձ քրիստոնէական աննախընթաց վերակենդանացում մը տեղի կ'ու- նենայ: 1900ին աշխարհի բնակչութեան 9 առ հա- րուսը քրիստոնէան էր: Համաժամութիւնը այսօր 46 առ հարիւր է: Երեւոյթը մասամբ արդիւնք է ՍիՏԱԻ պատճառով մահացութեան համեմատու- թեան մազցումին՝ ոչ քրիստոնեայ հաւաքակա- նութիւններու մէջը:

Իսլամութեան մէջ միշտ վերէն պարտադը- ւած է սահմաններու պաշտպանութիւնը: Այդ սահմանները այժմ կը խորտակուին: 1990ին թե-

րեւ կարելի էր հակակշիռի տակ պահել ելեկտը- րոնիք սահմանները: Այսօր արդէն կարելի չէ:

Վերջերս Պաղատատի տնտեսութեան վերաբե- րող լուրերու մէջ գլխաւոր նիւթը պատկերաս- փիւռի արբանեակային ալեհաւաքներու կարե- ւորութիւնն էր: Սատտամ Հիւսէյն զանոնք հե- ռու պահած էր իր երկրէն: Սակայն այլեւս՝ ոչ: Իսլամութիւնը չէ որդեգրած մշակութային պաշտպանութեան անհրաժեշտ միջոցառում- ներ: Անոնք հիմը ինքնագոյտման է: Իսլամու- թիւնը դէմ յանդիման կը գտնուի զարգացած մշակոյթի մը, որուն ելեկտրոնիք արհեստագի- տութեան զարգացումը կանգ պիտի չառնէ: Կասկած չկայ, թէ իսլամութիւնը պիտի ունենայ իր փոխնորոնքները, սակայն անոնց քովանդա- կութիւնը պիտի հետեւի Հոլիվուտի ուղղու- թեան, ինչպէս այլուր: Ինչո՞ւ իսլամութեան պա- րագային տարբեր պիտի ըլլար:

Ինչ որ 1400 տարի արդիւնք տուած է իսլա- մութեան համար՝ գէնքեր եւ սահմանային դիմ- ւորներ, այլեւս ապարդիւն է: Նոյնպէս՝ ոստի- կանութիւնը:

Միջին Արեւելքի մէջ կ'ատեն Ամերիկան: Սա- կայն շատ ուշ է վերէն պարտադրուած յաջող դի- մադրութեան համար: Իսլամութիւնը այժմ պէտք է զարգացնէ ինքնակառավարումի վրայ հիմնուած պաշտպանութեան միջոցառումներ: Իսլամական յեղափոխական եղբայրութիւնները այս մասին կը մտածեն: Կը մնայ տեսնել, թէ արդեօք իսլամը զանգուածները եւս այս մասին կը մտածեն:

Կարելի է եզրակացնել, թէ ժամանակը կը սպառի Ուսամա Պըն Լատէնի եւ անոր ընկերա- կիցներուն համար: Վիտէոյի այդ վաճառատան մէջ մանուկները կը սիրեն Մէլ Կիպսընը: Եթէ Պըն Լատէն կրնայ ինքզինք վաճառել իրրեւ իս- լամութեան «Պրէյվհարթ»ը, ան պիտի կարենայ զինուորազրեանքները գտնել: Կը կարծեմ, թէ ար- դէն կը փորձէ այն ընել: Սակայն «Պրէյվհարթ» ժապաւէնին մէջ մահացող Ուելիւրմ Ուուլթլայի վերջին խօսքը «ազատութիւն» բառն է: Ասիկա իսլամութեան բառապաշարին մաս չի կազմեր: «Իսլամ» կը նշանակէ «յանձնուիլ»:

(ՅԱՊԱՌՈՒԱՄ)

«ԹԱՔՈՒՆ ՕՐԱԿԱՐԳ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆ»

«ԱՆՔԱՆ ԲՐՈՒՋ ՆԵՐԹԻՆՈՒՆ» ԹԵՐԹԻՆ ՄԵՋ ՅՕԴՈՒՄ ՍԸ ԿԸ ՆԵՐԿԱՅԱՑԵ ԲԱՐՈՅԱԳԻՏՈՒԹԵԱՆ ՌԻՍԻՏԻՉԻ ՍԸ ՊԱՏԱՍԽԱՆԸ՝ ՄԻԱՑԵԱԼ ՆԱԿԱՆՍԵՐՈՒ ԿՈՂՄԵ ԵՐԱՊԱՐԱԿՈՒՄ ԱՄԵԼԵՆ ԱՄԵԼԻ ՓՆՏՈՒՄ ԻՐԱՔՅԻՆԵՐԸ ՊԱՏԿԵՐՈՂ ԽԱՂԱՔՐՏԵՐՈՒՆ

Երկրորդական վարժարանի ուսուցչուհի մը ըր ատած է, թէ Միացեալ Նահանգներու պետու- թիւնը ամբողջական խաղաքարտերով չի խաղար իրաքի պատերազմը, հետեւաբար ան տպագրած է իր սեփական խաղաքարտերը՝ փաստելու հա- մար իր տեսակէտը:

Սանթա Քրուզի մէջ շուկայ իջած են «Օփը- ըյշըն», հիտլըն անենտը» (Թաքուն օրակարգ գործողութիւն) անունով խաղաքարտեր, որոնք Քէյթի էտրի պատասխանն են Միացեալ Նա- հանգներու կողմէ հրապարակուած ամէնէն աւելի փնտուած իրաքցիներուն պատկերը կրող խաղաքարտերուն:

Էտրի խաղաքարտերը քիչ մը կը տարբերին նախագահ Ճորժ Պուշի վարչամեքենային հրա- պարակած խաղաքարտերէն: Անոնք կը պատկե- րեն ամերիկացի պետական պատասխանատու- ներ: Օրինակ՝ ճանճին չորսը կը կրէ իրաքի մէջ ամերիկեան բանակի կեդրոնական հրամանա- տարութեան ներկայացուցիչ Թոմի Յրէնքսի նկարը եւ անոր մէկ խօսքը: «Մենք դիակներ չենք հաշուեր»: Նախագահ Պուշի ժպտուն դէմքը կը գործարք ճանճին մէջ եւ անոր տակ գրուած է՝ «Իսլամիստի բռնադատը»:

Էտրի նախասիրած խաղաքարտն է մաչային մէկը, որուն տակ գրուած է՝ «Տանըլտ Պաղատա- կի երթայ»: Անիկա կը պատկերէ Միացեալ Նա- հանգներու պաշտպանութեան նախարար Տա- նըլտ Ռամսֆելտին եւ 1983ին դէպի Պաղատա- անոր այցելութեան հակիրճ ակնարկութիւն մը: Ռամսֆելտ իրրեւ յատուկ պատուիրակ ուղար- կուած էր իրաք՝ նախագահ Սատտամ Հիւսէյնը համոզելու համար, որ Միացեալ Նահանգներու համեմատութեամբ կազատար խողովակ մը կառուցելու պայմանագրութիւն մը կնքէ:

«Հանդիպումը տեղի ունեցաւ այն օրը, երբ Միացեալ Նահանգներու կողմէ ուղարկուած յա- մուկ յանձնախումբը հաստատեց, թէ Սատտամ Հիւսէյն քրիմիական գէնքեր գործածած է իրան- ցի զինուորներու դէմ», գրուած է խաղաքարտին տակ: Իւրաքանչիւր խաղաքարտի ետեւը կ'երե- լի Տանըլտ Ռամսֆելտի նկարը, որուն մէջ ան իր այցելութեան առիթով Սատտամ Հիւսէյնի ձեռքը կը թօթուէ:

Էտրը «Բարոյագիտութիւն եւ ընկերային ար- դարութիւն» նիւթը կը դասաւանդէ մանչերու յատուկ կաթոլիկներու երկրորդական վարժա- րանի մը մէջ (Սան ժոզէ): Ան կ'ըսէ, թէ խաղա-

քարտերը հրապարակելու գաղափարը յղացած է, երբ իր աշակերտները պնդած են, թէ իրաքի դէմ պատերազ- մը արդարանալի էր, սակայն չեն կրցած փաստեր կամ պատճառներ տալ՝ իրենց հաստատումները վաւերացնելու համար:

«Այս պատերազմը ամբողջութեամբ սխալ էր եւ ամբողջութեամբ ազատու- թեան արդիւնք էր, - կ'ըսէ էտրը: - Տե- ւաբար սուտեր ըսին մեզի»:

Խաղաքարտերը ճշմարտութեան դա- սընթացք մըն են, կ'ըսէ էտրը: «Ինծի համար յստակ էր, թէ պէտք էր ընէի այն, ինչ որ միշտ քաջալերած եմ, որ ընեն աշակերտներս. այսինքն կեանքս օգտագործել՝ այլոց կեանքին մէջ փո- փոխութիւն մը յառաջանելու համար»:

Էտրը տեղեկութիւններ հաւաքած է լրատուական շաբա մը կազմակերպու- թիւններէ եւ հրատարակութիւններէ, ինչպէս՝ «Տը Նիւ Եորք Թայմզ», «Պի. Պի. Սի.», «Մատը Չոնզ», «Իրաքպատերազմը. նէթ», «Սան ժոզէ Մըքիլերի Նիւզզ» եւ «Տը Ուաշինկ- թըն Փոսթ»: Անոր օգտագործած բոլոր աղբիւր- ները նշուած են խաղաքարտերուն վրայ:

Ինչ կը վերաբերի նկարներուն, բոլորն ալ փոխ առնուած են Միացեալ Նահանգներու պաշտպա- նութեան նախարարութեան համապատասխան- իտըր կ'ըսէ, թէ խաղաքարտերը կ'արտացո- լեն կաթոլիկութեան այն ուսմունքը, թէ՛ «ոչ մէկ պատերազմ արդարանալի է»:

Այստեղ Քրուզ Քաունթիի նախկին վերակցուն՝ Մարիլին Լիտլթըթ, որ թունդ պահպանողական մըն է, այնքան ալ խանդավառ չէ խաղաքարտերով:

«Ասիկա ոչ հայրենասիրական արարք մըն է, - կ'ըսէ Լիտլթըթ: - Այսպիսի բան մը ընելը շատ թշուարական կեցուածք է Ամերիկայի դէմ»:

Լիտլթըթ, որ նախապէս կը ղեկավարէր Սան- թա Քրուզ Քաունթիի կրթական համակարգը, կ'ըսէ, թէ էտրը պէտք է դպրոցէն վտարուի, որովհետեւ աշակերտներուն ուղեղը կը լուալ: «Երբ 20 տարի առաջ կրթական համակարգը կը ղեկավարէի, կը տեսնէի, թէ ինչպէս ազատա- միտ ուսուցիչներ կը լուային մանուկներուն ու- ղեղը», կ'ըսէ Լիտլթըթ, որուն համեմալն, էտը- րի խաղաքարտերն ու տեսնուած անարժանա- կան արարքներու մղելու ուժով ունին:

Սակայն էտրը, որ իրեն համար յատկացուած



Ըէյթի Ետրը շուկայ իջեցուցած է խաղաքարտերու տրոպ մը, որ կը կոչուի «Թաքուն օրակարգ գործողութիւն» եւ կ'ընդգրկէ Բուլիո Փառուլի, Ճորժ Պուշի, Տանըլտ Ռամսֆելտի եւ ամերիկացի այլ ք

ԸՆՏՐԱՊԱՅՔԱՐԻ ՎԱՌԵԼԱՆԻԹԵՐԸ...

Շարունակում՝ 5րդ էջէն

Մոցի առաջին պատերազմին ետք, Իրաքի պարտադրուած պատժամիջոցները տնտեսական սնանկութեան տարին Իրաքն ու անոր ժողովուրդը: Իրաքի հայտնի բնական օժանդակութեան ձեռք երկարելու կոչերն ու նախաձեռնութիւնները ցոյց կու տան, որ տագնապը միայն պատերազմափուլում չէ... Իրաքի մասին երբեմն ցուցադրուող վաւերագրական-լրատուական ժապաւէնները ցոյց կու տան, որ աշխարհի ամէնէն հարուստ երկիրներէն մէկը հանդիսացող այս երկիրը, «սեռ սկիզբի» հսկայական հարստութիւններու վրայ նստող երկրամասը, մատնուած է սովի, նիւթական տագնապի, առողջական աղէտալի կացութեան ու նմանօրինակ դժգոհ պայմաններու: Քաղաքներու մէջ սպասարկութիւնները ջրաբերութեան, էլեկտրականութեան ու ջուրի տաքանայ կայ (Եփրատի ու Տիգրիսի արեւմտեան), ժողովուրդին սննդաբաշխումի աշխատանքները, որոնք Մատամ Հիւսէյնի իշխանութեան վերջին տարիներուն ընդգրկուած էին ընդհանուր շուկայի վերականգնման, առողջութեան մատնուած են: Անգամ մը որ Մատամը իշխանութեան հեռանայ՝ սննդանիւթ ու բարձր պայմաններ պիտի տրամադրենք» խոստումները չեն իրականացած, այդ մասին այսօր խոսող չկայ, մինչդեռ աւելի ազատ կերպով կը խօսուի Իրաքի վերաշինութեան ու անոր քարտեզին շահարկման բաժնեկցութեան տարագրութեան մասին, շահու դաշտեր, որոնք վրայ սեւեռած են ամերիկեան ու արիւսական ընկերութիւններու աշքերը (պատերազմին չմասնակցողներն ալ կը փորձեն կարկանդակէն բաժին ստանալ): Մէկ խօսքով, Իրաքի ժողովուրդը, առաջին պատերազմին ու անոր հետեւանքներուն զինը վճարելէ ետք, կը շարունակէ վճարել նաեւ այսօրուան զարգացումներուն գինը: Իսկ վաղը, երբ քարտեզի հարստութեանց պաշտօնական իրացման տարագրութեան ճշգրտին, Իրաքի վերաշինութեան (ինչը քանդուեցաւ որ...) ծրագիրները պիտի վստահուին օտար ընկերութիւններու, ամերիկեան շաք մը ընկերութիւններ արդէն Ուաշինթոնէն մեծագումար պայմանագիրներ ապահոված են պատերազմէն ամիսներ առաջ, իսկ միջազգային շուկային մէջ կը խօսուի լուսաճուրդներու մասին, թէ որոնք փշրանքներ պիտի ապահովեն մեծ կարկանդակէն:

«Երկրի մը ընդհանուր հարստութիւններուն իրաւատէրը նախ եւ առաջ այդ երկրին ժողովուրդն է» հասկացութիւնը մնացած է 19րդ եւ քիչ մը ալ 20րդ դարուն մէջ: Մենք հիմա 21րդ դարը կ'ապրինք, այսինքն, նոր ոճով վերագործ մը կը կատարենք դէպի պայթածատիրական դարաշրջան, առանց սակայն իրողութիւնները կոչելու իրենց իսկական անունով: Այս տրամաբանութիւնն ու «բարիքները» բնականաբար կ'իրարկուի կը գտնեն նաեւ այլ երկրամասներու: Ափրիկէի, Ասիոյ կամ Հարաւային Ամերիկայի մէջ (Լիպերտի մէջ վերջին շարժումներու արիւնահեղութիւնները միայն վերջին օրինակն են) ու սակաւին, կրնան ծաւայ գտնել Իրաքի դրացի երկիրներուն գօտին մէջ...:

Այս բոլորով, կրնանք ինքնավստահօրէն ըսել, - Կեցցեն ընտրապայքարները, որոնք կը մղուին աշխարհին ու ընտրափոփոխեան ենթակայ ժողովուրդներուն խաղաղութիւն ու բարօրութիւն բերելու նշանախօսքերով...:

ԽԱՉԲԱՌԹԻՒ 5498 Պատրաստեց՝ Տ.Ս. ԱՂԱԶԱՐԵԱՆ

1	2	3	4	5	6	7	8	9	10	11
1										
2										
3										
4										
5										
6										
7										
8										
9										
10										
11										

- | | |
|--|--|
| <p>ՇՐՈՒՋՈՒԿԱՆ</p> <ol style="list-style-type: none"> Գեղափետուէր թռչուն - Լծորգութիւն: Ընթացք - Նազանքով քայլ: Կրկնուած բաղաձայններ - Պարտեսակ: Մաղիամի թագաւորներէն - Կրկնաքի ծակ: Մերձաւոր Արեւելքի պատմական երկիրներէն - Ալբերքէնէն: Փարէսի եղբայրը - Սանձ: Սեպէ՝ - Նախարարու գուր: Մտածէ՝ - Ջօրք: Կրկնուած բաղաձայններ - Ձայնակից գիրքեր - Դայար: Հայաստանի գետերէն - Հասակ: Շրջագիծ - Ներհակ: | <p>ՈՒՂԱՄԱՅԵՍ</p> <ol style="list-style-type: none"> Պարսիկ կուսակալ - Մուշ (հակ): Փաքիստանի գետերէն - Իրական անուն: Դրկից տառեր - Ասորի - Յարաբերական դերանուն: Աքաղաղներու կուր: Պոլսահայ մեծատուն - Ճամբայ: Յասակաբար - Իծ - Յուցական անակալ: Ժամանակի միւտուր - Անհատ: Շատ գրասէր - Ակնոցաւոր օձ: Քայլաչափ - Խաճող: Շին Ֆէյնի գինուորական թելը - Դեռափրթիթ: Ձայնանիշ - Առեղ - Ջորջուած պտուղ: |
|--|--|

ԹԻՒ 5497

ԽԱՉԲԱՌԻՆ


ԼՈՒԹՈՒՄԸ

1	2	3	4	5	6	7	8	9	10	11
1	U	Q	U	U	U	U	U	U	U	U
2	U	Q	U	U	U	U	U	U	U	U
3	U	U	U	U	U	U	U	U	U	U
4	U	U	U	U	U	U	U	U	U	U
5	U	U	U	U	U	U	U	U	U	U
6	U	U	U	U	U	U	U	U	U	U
7	U	U	U	U	U	U	U	U	U	U
8	U	U	U	U	U	U	U	U	U	U
9	U	U	U	U	U	U	U	U	U	U
10	U	U	U	U	U	U	U	U	U	U
11	U	U	U	U	U	U	U	U	U	U

ՃԱՏՐԱԿ

1


ՃԵՐՄԱԿՆԵՐԸ ԿԵ ՄԱՂՆ ԵՆ ՄԱՔ 2 ՇԱՐԺՈՒՍՈՎ



ՖԵՐԱՆՏԻ Պ. - ԿԻԿԱՆ Ի.

2


ՍԵՒԵՐԸ ԿԵ ՄԱՂՆ ԵՆ ՄԱՔ 2 ՇԱՐԺՈՒՍՈՎ



ՍՈՒԻԵՐ Լ. - ԲԱՍԵԼԼԱ Լ.

3


ՃԵՐՄԱԿՆԵՐԸ ԿԵ ՄԱՂՆ ԵՆ ՄԱՔ 2 ՇԱՐԺՈՒՍՈՎ



ՃԱՐՈՊԱՆ Լ. - ՓԱՍԵԼ Ա.

4

ՃԵՐՄԱԿՆԵՐԸ ԿԵ ՄԱՂՆ ԵՆ ՄԱՔ 2 ՇԱՐԺՈՒՍՈՎ



ՆԻԼՍՈՆ

Խնդիրներուն լուծումը տեսնել՝ 10րդ էջ

Այս սիւնակը պատրաստեց՝ Էլի Հուլիշեան

★ Ի՞նչ կ'ըսեն ԱՍՏՂՆԵՐԸ ★

ԽՈՅ (21 Մարտին 20 Ապրիլ)
Օրը յարմար չէ ձեր բոլոր հարցերը ներկայացնելու ձեր շուրջիներուն: Եղբ գաղտնապահ, որպէսզի սխալ չմեկնաբանուի ձեր փոխանցած տեղեկութիւնները:

ՅՈՒՆ (21 Ապրիլէն 21 Մայիս)
Ճամբորդութիւն մը պիտի կատարէք, բայց ան ձեր ակնկալածին պէս պիտի չընթանայ: Արկածախնդրութիւնները ձեզ կը սպասեն: Այսուհանդերձ մտահոգիչ ոչինչ կայ:

ԵՐԿՈՒՇՆԵՐԸ (22 Մայիսէն 21 Յունիս)
Ամսուան աւարտին, տնտեսապէս լաւ է ձեր վիճակը: Այդ մասին մտահոգութիւն չունիք: Շարունակեցէք ձեր աշխատանքը, բաժին մըն ալ տրամադրելով ժամանակ, գրասեղանի:

ԽԵՅՅԵՏԻՆ (22 Յունիսէն 23 Յուլիս)
Եթէ դիմում մը կատարէք տեղ մը, պիտի չմերժուիք: Ուրեմն այս առիթը օգտագործեցէք բարեխաղու համար ձեր սպասելի յատուկ աշխատանքները:

ԱՌԻԻՄ (24 Յուլիսէն 23 Օգոստոս)
Եթէ բժշկական քննութեան մը ենթարկուիք, ձեր միտքը ապահով պիտի ըլլայ եւ ձեր մտահոգութիւնը պիտի փարատի: Օրը իրեն հետ պիտի բերէ լաւ լուրեր: **ԿՈՅՄ (24 Օգոստոսէն 23 Սեպտեմբեր)**
Տարիքոտ անձ մը ունի առողջական հարց, որուն պիտի օգնէք այսօր, որպէսզի ան դուրս գայ իր մտահոգութենէն: Մարդասիրութիւնը հոգեկան հանդարտութիւն պիտի ներշնչէ ձեզի:

ԿՇԻՌԻ (24 Սեպտեմբերէն 23 Հոկտեմբեր)
Աշխատանքի մարզին մէջ եթէ յիշեցնէք պատասխանատուի մը իր խոստացած ամսականի յաւելումին մասին, ան պիտի ձեւեմայ անգեղ ու անտարբեր, բէինջ բանի կը վերաբերի հարցը: Մի պատասխանէք, այլ համբերեցէք:

ԿԱՐԻՃ (24 Հոկտեմբերէն 23 Նոյեմբեր)
Վե՛ն մը դրացիի մը կամ այլ անձի մը հետ, պիտի աւարտի յօգուտ ձեզի: Բայց պահանջկոտ մի ըլլաք, եւ ձեր փափաքները չափաւորեցէք: Օրը նպատակաւոր է:

ԱՂԵՂՆԱՒՈՐ (24 Նոյեմբերէն 21 Դեկտեմբեր)
Ստեղծուած լաւ պատեհութիւնները նկատի առեք, նոյն ատեն մնացէք իրապաշտ: Այսուհանդերձ ձեր բողոքի հակաբեկները նոյն կողմին մէջ մի դնէք: Այսինքն՝ եղէր գոյշ:

ԱՅՄԵՂՋԻԻ (22 Դեկտեմբերէն 20 Յունուար)
Անկեղծ գրոյց մը պիտի ունենաք ձեր սրտին խօսող անձին հետ, բայց չէք գիտեր թէ ո՞ր կողմէն պետք է սկսիք խօսել: Եղբ իրապաշտ ու հանդարտ:

ԾՈՎԱՆՈՐ (21 Յունուարէն 19 Փետրուար)
Շաբաթուան առաջին օրը գործի պիտի սկսիք շատ եռանդուն, ինչ որ քիչ անգամ կը պատահի: Պիտի ունենաք հետաքրքրական հանդիպումներ, արտասահմանէն պիտի ստանաք լաւ լուրեր:


ՁՈՒԿ (20 Փետրուարէն 20 Մարտ)
Եթէ մէկը ձեզի հրաւիրէ քաղաք մը երթալու, մի մերժէք: Ձեր յոգնութիւնը պիտի փարատի տաք ջին վաշիկեանէն իսկ: Օրը պիտի անցնի գուարք մ'ընդունի մէջ:

ՕՐԱՏԵՏՐ

ՓԱՌԱՏՈՆ / ՅՈՒՅԱԿԱՆԳԵՄ / ՉԲՕՍԱՆԵՐՉՈՒԹԻՒՆ

ԱՄՐԱՆ ՓԱՌԱՏՈՆԸ ԻՐ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ՀԱՐԱԹՆԵՐԸ ԿԸ ՓԱԿԷ «ԼԸ ՄԱՍՔ»Ի ԵԼՈՅԹՆԵՐՈՎ

Մինչեւ 31 Յուլիս շարունակուող եւ իր երաժշտական ձեռնարկները Լիբանանի պարոք երաժշտութեան վանական վայրերու մէջ ներկայացնող Ամրան փառատօնը անցնող շաբաթներուն «Պարոք անասմայի»ի եւ «Տիւ Մէթրի»ի ելոյթներէն ետք, այսօր օրերուն հանրութեան կը ներկայացնէ դարձեալ պարոք երաժշտութեան «Լը մասք» խումբը: 25 եւ 27 Յուլիսին Թալէի Նոթթը Տամ էկեղեցոյ եւ Ռէյֆունի մարտնիներու պատրիարքարանին մէջ կոյգ ելոյթներով հանդէս գալիս ետք, այսօր եւ վաղը «Լը Մասք» հանդէս պիտի գայ շաբաթը Պեքտոքի Մէն ժողովանքին մէջ (երեկոյեան ժամը 8:00ին), Պահանէսի հիւանդանոցին (29 Յուլիսի երեկոյեան ժամը 4:00ին) եւ Պալմանտի համալսարանին մէջ (29 Յուլիսի երեկոյեան ժամը 7:30ին):



Սթրապպուրկեան այս նուագախումբին անդամներէն 11րդ եւ 13 դարերու երոպական նուագարաններով պիտի նուագեն երգէն 17րդ եւ 18րդ դարերու երոպական (գերմանական, լեհական, իտալական, անգլիական եւ ֆրանսական) դասական պարոք երաժշտութեան ընտրանի մը:

Վերջին քանի մը ամիսներուն Լիբանան գտնուող եւ այլ առիթներով եւս հանրութեան ներկայացած «Լը մասք» նուագախումբին անդամներն են՝ Մարք Հերգիէօ (սրինգ), Ճոնըրըն Նուպէլ (ջութակ), Փիլիպ Բեյթթըր (թեորայէ) եւ Քլեման Թրենպ (վիոլ տրկամպ): Անոնք պիտի նուագեն Լամպրոթի, Վան Այքի եւ Հենտէլի երաժշտական կտորներէն:

Նշենք, որ «Լը մասք»ի բոլոր ելոյթներուն պիտի մասնակցի սպորտս (Սիէլ) լա շիւս:

- Ցուցահանդէս՝ Ռաշանայի Քանկակարծութեան միջազգային ֆորում, մինչեւ 9 Օգոստոս:

- Տէյր էլ Քամարի փառատօն. քաղաքի կենտրոնում՝ «Լամուր տե քրուա օրանթ», ժամը 20:00ին, Տէյր էլ Քամարի Սեթայը:

- Ամրան փառատօն. Երգահանդէս՝ «Լը մասք» (պարոք երաժշտութիւն), ժամը 20:30ին, Ռէյֆունի մարտնիներու պատրիարքարան:

- Հայերէն Այբուբենի նուիրուած ցուցահանդէս՝ «Ապրող եւ արեցնող», Մանուկ Հոփալեանի գործերը, «Վարուժան Արք Սեթթըր»ի մէջ, մինչեւ 7 Օգոստոս:

- Նկարչական ցուցահանդէս՝ «Նուլօ Թալան», Սիբրիա Քարամի եւ Նայա Տապաթի գործերը, «Փրնէլ» ցուցարան, մինչեւ 21 Սեպտեմբեր:

- Նկարչական հաւաքական ցուցահանդէս, «Ժակին Ռուպէլ» ցուցարան, մինչեւ 22 Օգոստոս:

- Արկածախնդրական խաղերու փառատօն՝ «Էքսքրիմ էտվենջըր Փարք» Պե՛լ, մինչեւ 2 Օգոստոսի վերջը:

- Ջետեման արուեստի գործերու ցուցահանդէս՝ Նատա Սընհուլի «Աթազաքար. ֆրաքսիոն տը մեմուար», մինչեւ 31 Յուլիս, Նահատակաց հրապարակ:

ՕՅԵՐԵՆՈՅԸ

ԵՐԿՈՒՇԱԲԹԻ, 10 ՅՈՒՆԻՍ 2003

ՊԵՅՐՈՒԹ

ՄԱՍԱՍԲ ԱՄՊՈՏ

ՋԵՐՄԱՍՏԻՃԱՆ

ՑԵՐԵԿ՝ 30°C

ԳԻՇԵՐ՝ 23°C

ՆՈՆԱՌՈՒԹԻՒՆ՝

71%

ԱԶԳԱԿ 50 ՅԱՐԻՔ ԼՄՈՒՄԸ 28 Յուլիս 1953

ԱՐԱՄ ԽԱՉԱՏՐԵԱՆԻ 50ՐԴ ՏԱՐԵԴԱՐԶԸ

Մոսկուայի մէջ Յունիս 8ին տօնուած է մեծանուն երգահան Արամ Խաչատրեանի ծննդեան 50րդ տարեդարձը: Ընտրանի բազմութիւն մը ներկայ գտնուած է Մոսկուայի գեղարուեստագետներու կեդրոնատեղին յարգանքի տուրք ընծայելու համար մեծ երաժշտագետին:



Երեկոյեան բացումը կատարեց Խորհրդային երգահաններու Միութեան ընդհանուր քարտուղար երաժշտագետ Քիլոն Խրեմկինով, որ իր ճառին մէջ դրուատեց Արամ Խաչատրեանի արժանիքները եւ բնութագրեց անոր բերած նպաստը խորհրդային երաժշտական մշակոյթին:

Արամ Խաչատրեան, երաժշտական մարզի մէջ կատարած մեծաթիւ իրազորումներուն համար, պարգեւատրուած է Ա. կարգի շքանշաններով:

ԱՅՍՕՐ 28 ՅՈՒՆԻՍԻՆ

1968. Մահ տաղանդաւոր գրագետ եւ քննադատ Շաւարշ Նարդուհի:

Մ Ա Ր Ջ Ա Կ Ա Ն ԱՇԽԱՐՀ



ԼԻԲԱՆԱՆԻ ՊԱՍՔԵԹՊՈՒԼԻ ՆՈՐ ՖԵՏԵՐԱՍԻՈՆԻ ԸՆՏՐՈՒԹԻՒՆ



Անցեալ Շարաթ օր, Ղազիրի մարզական կեդրոնին մէջ տեղի ունեցաւ Լիբանանի պասքեթպոլի նոր ֆետերասիոնին ընտրութիւնը, մասնակցութեամբ 118 ակումբներու (ակումբներու ընդհանուր թիւը՝ 151):

Ընտրութեան առաջ Ռիատի եւ Մոն Լա Սալ պաշտօնապէս յայտարարեցին, թէ պիտի չմասնակցին ընտրութեան:

Առաւելագոյն ձայն ապահովողը հանդիսացաւ ֆետերասիոնի նախագահ Ժան Համամ, որ ստացաւ 240 ձայն:

Ստորեւ՝ Լիբանանի նոր ֆետերասիոնի կազմը, իրենց շահած ձայներով եւ պաշտօններով:

- Նախագահ՝ Ժան Համամ (240 ձայն)
- Փոխ նախագահ Ա. Էլի Աշքուրի (232 ձայն)
- Փոխ նախագահ Բ. Մահմուտ Տիպ (պատուոյ անդամ)
- Փոխ նախագահ Գ. Մոհամետ Ապու Պաքըր (232 ձայն)
- Քարտուղար՝ Ճօ Մըքրի (232 ձայն)
- Գանձապահ՝ Վիգէն Ճեբէնեան (231 ձայն)
- Հաշուապահ՝ Ժան Թապէթ (231 ձայն)
- Ազգային խումբերու պատասխանատու՝ Ժան Բանո (232 ձայն)
- Անդամներ՝ Նայլա Թուէյի (239 ձայն), Ղասսան Ֆարես (232 ձայն), Ուալիս Բըրրի (230 ձայն), Ճօ Ֆախրի (232 ձայն) եւ Ժողէֆ Լպրոս (231 ձայն):

ԼՈՂԱՐՇԱԽԻ ԱՇԽԱՐՀԻ ԱՆՈՅՏԱՆՈՒԹԻՒՆ

ՌՈՒՓՐԱԹ, ՃԷԼՓՍ, ՔՐՈՔԸՐ ԵՒ Մ. ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒ ՏՂՈՑ ԽՈՒՄԲԸ ԱՐՁԱՆԱԳՐԵՑԻՆ ՆՈՐ ՄՐՅԱՆԻՇՆԵՐ

Պարսելոնայի մէջ (Սպանիա) տեղի ունեցող լողաձուլի աշխարհի ախոյեանութեան մրցումներուն անցեալ շաբաթավերջին հաստատուեցան աշխարհի չորս մրցանիշներ:



Քրոքըր

Եւրոպայի ախոյեան թոմաս Ռուփրաթ (Գերմանիա) տղոց 50 մետր կուրծքի լողի մրցումներուն նոր մրցանիշ մը հաստատեց, արձանագրելով 24" 80 արդիւնք մը: Նախկին մրցանիշը կը պատկանէր ամերիկացի Լենի Քրեյվելպուրկի (24" 99):

Միացեալ Նահանգներ տղոց 4x100 մետր լողի մրցումներուն հաստատուեցին նոր մրցանիշ մը, արձանագրելով 3' 31" 54 արդիւնք մը: Նախկին մրցանիշն էր՝ 3' 33" 48: Ամերիկացի Իան Քրոքըր, որ մաս կը կապուէր վերոնշեալ խումբին, իր կարգին աշխարհի նոր մրցանիշ մը հաստատեց, երբ 100 մետր թիթոնիկի լողի մրցումներուն արձանագրեց 50" 98 արդիւնք մը (նախկինը՝ 51" 47):

Այլ ամերիկացի մը՝ Մայքլ Ֆելիս տղոց 400 մետր ապստ լողի մրցումներուն աշխարհի նոր մրցանիշ մը հաստատեց, արձանագրելով 4' 09" 09 արդիւնք մը: Նախկին մրցանիշն էր 4' 10" 73:

ԼԻՎԸՐՓՈՒԼ ԿԸ ՇԱՐՈՒՆԱԿԷ ԱՍԻԱԿԱՆ ԵՐԿԻՐՆԵՐ ԻՐ ՇՐՋԱՊՏՈՅՏԸ

Ասիական երկիրներ իր կատարած շրջապտոյտին ընթացքին, Լիվըրպոլ շաբաթավերջին արձանագրեց իր երկրորդ յաղթանակը, երբ 6-0 արդիւնքով պարտութեան մատնեց Հոնկ Բոնկը:

Անգլիական կազմին վեց անգամապսխան կոլերը նշանակեցին՝ վլատիմիր Սմիչկի (15րդ), Էմիլ Էսթրի (58րդ եւ 90րդ), Անթոնի Լը Թալքը (75րդ) եւ Միլան Պարոս (77րդ եւ 90րդ):

Իր կատարած առաջին մրցումին, Լիվըրպոլ 3-1 արդիւնքով պարտութեան մատնած էր Թայլեանդ Պանթրոնի մէջ տեղի ունեցած մրցումին:

Լիվըրպոլի նոր միացած մարզիկներ՝ Հերի Բիլը (փոխանցուած՝ Լիթէն) եւ Սթիւ Ֆիլմը (փոխանցուած՝ Ֆուլհեմէն) մարզիչ ժեքար Հուլիէի կողմէ նկատուի չէին առնուած: Իսկ Բ. Կլիտախաղին սկիզբը Մայքլ Օուլըր փոխարինող ֆրանսացի երիտասարդ մարզիկ՝ Անթոնի յաջողեցաւ անմիջապէս տպաւորել, երբ կոլ մը նշանակեց:

Իր կազմին արձանագրած այս երկրորդ յաղթանակէ ետք, Հուլիէ դրուստիքով արտադատուեցաւ իր մարզիկներուն մասին, աւելցնելով, որ Լիվըրպոլ իր կատարելիք յաջող մրցումներուն ալ իրական պոլիւնք արձանագրելով, լաւապէս պիտի պարտաստուի 2003-2004 եղանակի Անգլիոյ բարձրագոյն զուգահեռակարգի խոյն-եռանութեան մրցումներուն: Անոր առաջին մրցակիցը պիտի ըլլայ Չեյսին:

ԱՐՄՍԹՐՈՆԿ ՅԱՋՈՐԴԱԲԱՐ ԸՆԳԵՐՈՐԴ ՏԱՐԻՆ ԸԼԼԱԼՈԿ ՇԱՐՇԱԲ ՖՐԱՆՍԱՅԻ ՐԵՏԵԼԱՐՇԱԽԻ ՇՐՋԱԿԱՋԸ



Արմսթրոնկ

Ֆրանսայի հեծելաբաշխ շրջապտոյտին 20րդ եւ վերջին հանգրուանի մրցումը, որ տեղի ունեցաւ Վիլտ Աւրիլէն Փարիզ (152 քմ.) վերջ գտաւ Ֆրանսացի Ժան-Փաթրիք Նագոնի յաղթանակով՝ 3 ժամ, 38 վայրկեան եւ 49 երկվայրկեան արդիւնք մը: Նշենք, որ Շարաթ օրու ժամացոյցի դէմ մրցումը (19րդ հանգրուան), որ տեղի ունեցաւ Փորնիքէն Նանթ (49 քմ.), վերջ գտաւ Բրիտանացի Տէյվիտ Սիլարի յաղթանակով, որ արձանագրեց՝ 54' 05" արդիւնք մը:

Նկատելի է, որ վերջին երկու հանգրուաններուն արդիւնքները ի նպաստ ամերիկացի Լէնս Արմսթրոնկի էին, որ այսպիսով յաջողեցաւ դառնալ հինգերորդ հեծելաձուլորդը, որ հինգերորդ անգամ ըլլալով (մրցանիշ մը) կը շահի այս տիտղոսը: Եւ. Էս. Փոսթլայի հեծելաձուլորդ Արմսթրոնկ յաջողեցաւ ալ իրագործում մըն ալ կատարել, երբ Ֆրանսայի հեծելաբաշխ շրջապտոյտի պատմութեան մէջ հաստատեցաւ սպանացի Միկէլ Ինտուրանի հաստատած մրցանիշին, որ յաջողագրար հինգ տարի՝ 1991էն 1995 տիրացած էր այս տիտղոսին: Դրուստեղէ ետք 31 տարեկան ամերիկացիին կատարած այս իրագործումը, Ֆրանսացի Պեռնար Հինո, որ վերջին ֆրանսացին է, որ շահած է Ֆրանսայի շրջապտոյտը (1985), նշեց, որ իր 100ամեակը տոնող շրջապտոյտը այս տարի յաջողեցաւ նախորդ տարիներէն շատ աւելի լաւ կազմակերպուած ձեւով ներկայանալ:

Շարաթ օրու ժամացոյցի դէմ մրցումէն ետք, արդէն իսկ Արմսթրոնկ գրեթէ ապահոված էր տիտղոսը, նկատուի ունենալով, որ ան թէեւ 14" ուշացումով հասած էր ժամանման գիծ, սակայն 11" ի առաւելութիւն մը ունէր իր անմիջական մրցակիցին՝ Ուլրիշի վրայ, որ անձրեւի պատճառով, սահելով գետին ինկաւ եւ ժամանակ կորսնցուց:

Այսպիսով, Արմսթրոնկ շրջապտոյտի աւարտին յաջողեցաւ արձանագրել 83 ժամ 41' 12" արդիւնք մը, 1' 01" ի առաւելութեամբ գերազանցելով Պիանի հեծելաձուլորդը:

ՄԻԱՑԵԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐ ԳՐԱԽԵՑԻՆ ՔՈՆՔԱՔԱՖԻ ՄՐՅԱՇԱՐՔԻՆ ՅՐԴ ԴԻՐՔԸ

Քոնքաքֆի «Կոլտ Գաֆ» ֆուտբոլի մրցաշարին 3րդ գիրքի մրցումին, Միացեալ Նահանգներ Մայքլի մէջ (Ֆլորիտա) տեղի ունեցած մրցումին յաջողեցան 3-2 արդիւնքով պարտութեան մատնել Գոսթա Ռիբան: Յաղթանակ կազմին կոլերը նշանակեցին Քարլոս Պոքանեկը (28րդ), Լրնի Սթիւրթ (55րդ) եւ Պոպի Բոնիվէյ (66րդ), իսկ Գոսթա Ռիբանի կոլերը՝ Ռոնալտո Ֆոնսեքա (23րդ եւ 38րդ):

Աւարտականի մրցումը տեղի պիտի ունենայ այսօր, երբ Պրագիլ պիտի ճակատի Մեքսիքայի դէմ, Ազիթեքայի դաշտին վրայ:

Միացեալ Նահանգներու արձանագրած այս յաղթանակը նկատուեցաւ կարեւոր, ոչ միայն անոր համար, որ ան գրաւեց երրորդ դիրքը, այլ որովհետեւ անկա յոյս ունեցաւ միջազգային ֆուտբոլի մրցաշարին տոմս մը ապահովելու:

Միացեալ Նահանգներ վերոնշեալ մրցաշարին պիտի մասնակցին այն պարագային, երբ հիւր խումբը՝ Պրագիլ պարտութեան մատնէ Մեքսիքան, որուն շնորհիւ Միացեալ Նահանգներ մրցաշարը պիտի աւարտեն իրենց լաւագոյն երկրորդը:



Չախէն աջ՝ Պեռնար Հինո, Էտի Մերքս, Լէնս Արմսթրոնկ եւ Միկէլ Ինտուրան

Ուլրիշը՝ վերջին հանգրուանին աւստրալիացի սփրինկթըր Պէյտոն Գուր կանաչ շապիկը խլեց իր ազգակիցէն Ռոպի Մաքիլընէն, այս անգամ ինք երկու կէտի առաւելութիւն մը ունենալով անոր վրայ: Ան ունեցաւ 216 կէտ, իսկ Մաքիլըն՝ 214:

Ստորեւ՝ հեծելաձուլորդներուն վերջնական դասաւորումը:



Մաքիլըն

- 1.- Լէնս Արմսթրոնկ (Մ. Ն.) Եւ. Էս. Փոքալ 83 ժամ 41' 12"
- 2.- Եւն Ուլրիշ (Գերմանիա) Պիանի 1' 01" ուշ
- 3.- Ալեքսանտր Վինոբուրով (Ղազախստան) Թիլեքով 4' 14" ուշ
- 4.- Թայլը Հէմիլթըն (Մ. Ն.) Սի. Էս. Սի. 6' 17" ուշ
- 5.- Հայմար Զուպիտիա (Սպանիա) Էուսթալթէ 6' 51" ուշ
- 6.- Իպան Մայո (Սպանիա) Էուսթալթէ 7' 06" ուշ
- 7.- Իվան Պասո (Իտալիա) Ֆասսա Պորթոլո 10' 12" ուշ
- 8.- Քրիսթֆ Մորո (Ֆրանսա) Գրետի Ակրիբոլ 12' 28" ուշ
- 9.- Քարլոս Սաքրէ (Սպանիա) Սի. Էս. Սի. 18' 49" ուշ
- 10.- Ֆրանչիսքո Մանչեպո (Սպանիա) Իպանեքո 19' 15" ուշ

Ստորեւ՝ կէտերու (կանաչ շապիկ) վերջնական դասաւորումը:

- | | |
|---|-----|
| | ԿԵՏ |
| 1.- Պէյտըն Գուր (Աւստրալիա) Ֆե. Տե. Ժե. 216 | |
| 2.- Ռոպի Մաքիլըն (Աւստրալիա) Լոքո 214 | |
| 3.- Էրիք Ցապլը (Գերմանիա) Թիլեքով 188 | |

Լեոնային վերջնական դասաւորումը:

- | | |
|--|-----|
| | ԿԵՏ |
| 1.- Ռիշար Վիլիքը (Ֆրանսա) Գուր Սքեփ 324 | |
| 2.- Լորան Տիւֆօ (Չեխոսլովակիա) Ալեքի 187 | |
| 3.- Լէնս Արմսթրոնկ (Մ. Ն.) Եւ. Էս. Փոքալ 168 | |

Խումբերու վերջնական դասաւորումը:

- 1.- Սի. Էս. Սի. 248 ժամ 18' 18"
- 2.- Իպանեքո 21' 46" ուշ
- 3.- Էուսթալթէ 44' 59" ուշ

Ստորեւ՝ հինգ անգամ այս տիտղոսին տիրացած հինգ հեծելաձուլորդները:

- Ժաք Անքէթիլ (Ֆրանսա) – 1957, 1961, 1962, 1963 եւ 1964
- Էտի Մերքս (Պելճիքա) – 1969, 1970, 1971, 1972 եւ 1974
- Պեռնար Հինո (Ֆրանսա) – 1978, 1979, 1981, 1982 եւ 1985
- Միկէլ Ինտուրան (Սպանիա) – 1991, 1992, 1993, 1994 եւ 1995
- Լէնս Արմսթրոնկ (Մ. Ն.) – 1999, 2000, 2001, 2002 եւ 2003

ԿՈՎՈՒ ՄԷԿ ԱՄԻՍ ՊԻՏԻ ԲԱՅԱԿԱՅԻ ԴԱՇՏԵՐԷՆ

Հարաւային Քորէայի մէջ տեղի ունեցած ֆուտբոլի «Կապիտաններ» բաժնի մրցաշարին իր մասնակցութիւնը բերած ֆրանսացի միջազգային յաղթանակի Սիտի Կոլմու, որ իր կազմին՝ Լիոնի հետ իր կատարած մէկ մրցումին վիրաւորուեցաւ, շուրջ մէկ ամիս պիտի բացակայի դաշտերէն, յայտնեցին ֆրանսական ակումբին պատասխանատուները:

23 տարեկան Կոլմու, Ֆրանսայի ֆուտբոլի ախոյեանութեան 2003-2004 եղանակի սկիզբը յաղթանակով ամիս թէեւ պիտի բացակայի մրցումներէն, սակայն պիտի մասնակցի յաղթանակայ Սեպտեմբեր 6ին տեղի ունենալիք Ֆրանսա-Կիպրոս մրցումին (Եւրո-2004 գտումի մրցաշարը):

ՔՈՒՊԱՅԻ ՅԵՂԱՓՈՒՆՈՒԹԵԱՆ
ՏՕՒՍԵՆԿԻ ՏՕՆԱԿԱՏԱՐՈՒԹԵԱՆ ԸՆԹԱՑԵՐՆ

ՔԱՍԹՐՕ ԽՍՏԻ ԿԸ ՔՆՆԱԴԱՏԵ
Ե. ՄԻՈՒԹԻՆԸ
ԵՒ ԿԸ ՄԵՐԺԵ ՊԱՅՄԱՆԱԴՐԱԿԱՆ
ՕԺԱՆԴԱԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ



Քուպայի նախագահ Ֆիտլի Քասթրո Շարք օր խստի քննադատած է Եւրոպական Միութիւնը խօսքի մէջ, Կոր արտասանած է այն վայրին մէջ, ուրիկ 50 տարի առաջ Քուպայի յեղափոխութիւնը ընթացքի մէջ դրած էր:

Հարաւարեւելեան Սանթիակո Տէ Քուպա քաղաքին մէջ արտասանած 70 վայրկեան տեւողութեամբ խօսքը գազաթնակէտն էր ետօրեայ տօնախմբութիւններու՝ 26 Յուլիս 1953ին Մոնթրալի Կորաւնոյն վրայ իր յարձակումին առնչութեամբ, որ Քուպական յեղափոխութեան սկզբնափայլն էր:

20 երկիրներէ հրաւիրուած հազարաւոր հիւրերու եւ պաշտօնատարներու առջեւ, Քասթրո հարուածած է ոչ թէ իր աւանդական թիրախը՝ Ուշինկընը, այլ՝ Եւրոպայն:

«Քուպայի կառավարութիւնը՝ մղուած արժանապատուութեան պագումէ, կը մերժէ մարդաւիրական որեւէ օժանդակութիւն, կոր Ե. Միութեան կառավարութիւնները կրնան յատկացրել», ըսած է ան:

Քասթրո յայտնած է, թէ Քուպա օժանդակութիւն պիտի ընդունի՝ «որքան ալ համեստ ըլլայ անկա», տեղական եւ շրջանային խմբակներէ, ոչ կառավարական կազմակերպութիւններէ եւ Կորակցութիւն ցուցաբերող շարժումներէ, «որոնք Քուպային քաղաքական պայմաններ չեն պարտադրեր»:

Ան կը հակադարձէր Ե. Միութեան Քուպայի հանդէպ փոխուած ոճին, Հաւանայի ալլախոներու վրայ վերջերս ի գործ դրած ճնշումներէն եւ դէպի Մ. Նահանգներ ուղղուող նաւ մը առեւանգել փորձած 3 աններու մահապատիժի ենթարկումէն ետք:

Յունիսին, Ե. Միութիւնը Քուպայի դէմ դիւանագիտական պատժամիջոցներ հաստատած էր, Միութեան բարձրաստիճան ներկայացուցիչներու սայելութիւնները սահմանափակելով:

Սակայն ամիս մը ետք, Ե. Միութեան արտաքին գործոց նախարարները իրենց կամքը վերահաստատած են՝ Քուպայի հետ տիպիկը շարունակելու, միաժամանակ կոչուցանելով, թէ օժանդակութիւնները պիտի շարունակեն միայն եթէ իրենց յատկացուցած գումարները ուղղակիօրէն քուպացիներուն հասնին եւ օգտագործուին՝ թափ տալու տնտեսական եւ քաղաքական բարեկարգումներուն:

Եւրոպական Յանձնաժողովը երկ կոչուցաւ շարունակել Քուպայի օժանդակութիւնները զրկել, հակառակ Քասթրոյի քննադատութիւններուն:

«Այգային ընթացողութեան օրը» կը շարունակէ Յուլիս 26ը սկիզբը կը նկատուի անկախութեան ինքնիշխան Քուպայի պայքարին: Թէեւ յարձակումը ձախողած էր, սակայն Քուպայի իշխանութիւնները այդ օրը կը նկատեն իբրեւ բռնատէր Ֆուլձենսիա Պաթիսթայի դէմ ժողովրդավարային ընթացողութեան սկիզբը:

ՄԱՆԻԼԼԱ ԱԿԱՆԱՏԵՍ ԿՂԸԼԼԱՅ
ԶԻՆՈՒՈՐԱԿԱՆՆԵՐՈՒ ԸՄԲՈՍՏՈՒԹԵԱՆ ՄԸ

Ֆիլիպինի մայրաքաղաք Մանիլայն երէկ ակա-նատես եղաւ 20 ժամ տեւած զինուորական գործողութեան մը: Ֆիլիպինի բանակի մէկ միաւորը, բաղկացած մօտ 300 ըմբոստ լաւապէս զինուած զինուորներէ գրաւեցին Մանիլայի Մաթաթի թաղամասի Այալա առեւտրական կեդրոնը: Կեդրոնը կ'ընդգրկէ պանդոկ մը, բազմաթիւ վաճառատուներ եւ աշտարակ մը: Զինեալներուն ընկերակցող արձակագէտները հակակը-չիտի տակ պահեցին ամբողջ թաղամասը, արգելելով կառավարական ուժերու որեւէ փորձ: Ականապատ-ւեցաւ ամբողջ կեդրոնը: Ըմբոստներու ղեկավարները յայտարարեցին, որ կեդրոնի պանդոկին հիւրերը եւ անձնակազմը պատանդ պիտի չվերցուին: Գրաւուած մօտ վեց ժամ ետք կեդրոնին մէջ գտնուող քաղաքացիները ու օտար զբոսաշրջիկները

ազատ արձակուեցան եւ օթոպիւսե-րով դուրս բեր-ւեցան կեդրո-նէն: Ըմբոստ զին-ւորականները իրենց յայտարարութիւններուն մէջ երկրի նախագահ Կլորիա Արոյոն եւ իր բարձրաստիճան օգնականները ամբաստանեցին երկրի հարաւային շրջաններուն մէջ բռնութիւններ գործադրող ըմբոստներու գէնը մատակարարելու յանցանքով: Անոնք նաեւ բանակի ղեկավարութիւնը ամբաստանեցին փտածուիթեամբ: Այսուհանդերձ, ըմբոստացած միաւորին կոչերը մնացին անարձագանգ եւ բանակի այլ միաւորներ չմիացան անոր: Նախագահ Արոյոյի



Ըմբոստ զինուորակազմեր Այալա կեդրոնին մէջ

կողմէ ըմբոստներուն հետ բանակցեցաւ Հանգստեան կոչուած զօրավար մը եւ 20 ժամ տեւած զինուած դիմակայութիւնը խաղաղութեամբ աւարտեցաւ, երբ զինեալները ականազեծեղով կեդրոնը վերադարձան իրենց զօրանոցը:

ԱՄԵՐԻԿԵՒՈՒՄ ԲԱՆԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ
Ա ՊԱՀՈՎԱԿԱՆ ՀԱՐՅԵՐՈՒ ՇՈՒՐՁ

Ամերիկացի եւ ռուս բարձրաստիճան պաշտօնատարներ անցեալ շաբաթ Մ. Նահանգներու մէջ գու-մարած են դռնփակ ժողովներ, որոնց ընթացքին համաձայն է, թէ չհաս-բեկչական բնոյթի սպառնալիքներ կը միացնեն երկու պետութիւնները, հակառակ արտաքին քաղաքականութեան մէջ զոյու-թիւն ունեցող տարակարծութիւններուն:

Հանգստեան արտաքին գործոց փոխ նախարար Ռիչըրտ Արմիթէյճ տե-սակցութիւն մը ունեցած է իր ռուս պաշտօնակիցին՝ Վիտալիյա Թրուպինիչովի հետ, առ ի պատրաստու-թիւն նախագահներ Ճորձ Գլուշի եւ Վլատիմիր Փու-թինի յառաջիկայ Սեպտեմբերի վեճաժողովին:

Ռուսիոյ արտաքին գործոց նախարարու-թիւնը ժողովներէն ետք հաղորդագրութեան մը մէջ ըսած է, թէ օրակարգի գլխաւոր նիւթը կեդրոնա-կան ասիական շրջանի ապահովութիւնը եղած է: Սակայն Թրուպինիչով աւելի ուշ յայտնած է, թէ երկու կողմերը համաձայ-նած են, որ միջազգային ահաբեկչական բնոյթի յարձակումները երկու երկրներուն սպառնալիք են եւ թէ անոնք սերտօրէն պիտի գործակցին անոնց դէմ պայքարելու համար: Ան աւելցուցած է, որ զաղտնի տեղեկութեանց բաժնեկցութիւնը գլխաւոր նիւթն է, գոր ինք եւ Արմիթէյճ արձարած են:

ԱՐԺԱՆԹԻՆԻ ԶԻՆՈՒՈՐԱԿԱՆ
ԲՈՆԱՏԵՐՈՒ ԳՈՐԾԱԿԻՑՆԵՐ
ԿԸ ՉԵՐԲԱԿԱԼՈՒԻՆ

Արժանթինցի դատաւոր Ռոտոլիք Քանիքո-պա Քորալ շաբաթավեր-ջին դատական յարուցի-նիստերու բացումը կա-տարած է՝ որոշելու հա-մար, թէ երկրին վիճու-րական բռնատէրերու ձեռքակալուած գործա-կիցներ Սպանիոյ պիտի յանձնուին մարդկային իրաւանց վերաբերող ամբաստանութիւնները:

Ռոտոլիք արտաքին գործոց նախարարու-թիւնը ժողովներէն ետք հաղորդագրութեան մը մէջ ըսած է, թէ օրակարգի գլխաւոր նիւթը կեդրոնա-կան ասիական շրջանի ապահովութիւնը եղած է:

Ռոտոլիք արտաքին գործոց նախարարու-թիւնը ժողովներէն ետք հաղորդագրութեան մը մէջ ըսած է, թէ օրակարգի գլխաւոր նիւթը կեդրոնա-կան ասիական շրջանի ապահովութիւնը եղած է:

Ան ըսած է, թէ սպա-նացի դատաւոր Պաթա-սար Կարսոնի կողմէ պա-հանջուած 46 անձերէն չորսը տակաւին չէ ձեռ-բակալուած: Զերբակալութիւնն-ը կարելի դարձած էին նախագահ Նեւթոյր Քիրչըրի Ուրբաթ օր-ւան մէկ որոշումէն ետք՝ բեկանելու հրամա-նագիր մը, որ կ'արգիլէր մարդկային իրաւանց բռնաբարումներու ամբաստանութեամբ այլ երկրի յանձնել արժան-թիւնը բռնատէրերու հետ գործակցած անձնա-ւորութիւններ:

Սանթիակոյի մէջ, 24 յուլի նախագահ Ռի-չարտո Լակոս ձեռքակա-լութիւններուն մասին գովասանքով արտա-յայտուած է, թէ իր, որ անոնք «ուժեղ պատգամ մը կը դրկեն անոնց» որոնք նման ոճիւրներ կը

գործեն, թէ այսօր միջազ-գային արդարութեան օր մըն է: 1973ին, 24 յուլի աշա-կողմեաններու պետա-կան հարուածէն ետք, Լակոս Արժանթին սպաստանած է: Յրանսայի արդարու-թեան նախարարուած են, թէ ձեռքակալութիւնները պիտի մղեն Փարիզը, որ պահանջէ ձեռքակալ-եալ ընդդիմադիրներու 500 պահակները (երեխա-ններ) առեւանգուած են: Դատական գործըն-թացը, որ Շաբաթ օր սկսած է, կրնայ միաներ տեւել, ըսած է դատաւո-րը:

ԱՄԵՐԻԿԵԱՆ ԲՈՆԱԳՐԱՒՈՂ
ՈՒԺԵՐՈՒ ԴԵՄԻՐԱՔԵԱՆ...

Շարունակուած Ա. Էջէն
պալային մէջ: Մօտ երեք հա-րիւր շիբ իրաքցիներ մաս-նակցեցան ցոյցին, իբրեւ բողոք քաղաքի կոթնական սրբատեղիին ուղղու-թեամբ ամերիկացիներու կողմէ արցունքաբեր ուժերը արձակման: ՈՒՏԱՅԻ եւ Գուսայի դիակներուն նկարներուն հրապարակումը քննա-դատուեցաւ եզրակարգական պաշտօնակալութիւն մը կողմէ: «Ահաբեկ» կը գրէր, որ Ուշինկընը երկու շաբա-թերու կ'ընդունէր կը դա-տապարտէր ամերիկացի գերի զինուորներուն նկարներուն պատկե-րասփոռումը իրաքցիներուն կողմէ, իսկ միւս կողմ-մէ, Ուտայի եւ Գուսայի դիակներուն նկարները ամբողջ աշխարհին դիմաց կը դնէր:

- 1. Պh4+ ց7 2. Պh6# 1-0
- 2. 1... Էxg2+!! 2. Պxg2 Պh4# 0-1
- 3. 1. Պb6+ ցd5 2. Պd6# 1-0
- 4. 1. Պd1 Էbxd2 [1... ցc3 2. dxc3#; 1... Էb5 2. cxb5#; 1... Էa5 2. c5#; 1... Էxc4 2. b7#; 1... Էcxd5+ 2. cxd5#; 1... Էc7+ 2. bxc7#; 1... Էxd5+ 2. exd5#; 1... Էxe4 2. f7#; 1... Էf5 2. exf5#; 1... Էg5 2. e5#; 1... Էe7+ 2. fxe7#; 1... ցfxd2 2. e3#; 1... ցe3 2. dxe3#] 2. c3#

ՊԹԸԳՐԻՆԻ ԴԵՊՔԻՆ
ԱՌՆԶՈՒԹԵԱՄԲ ՄԸՐ...

Շարունակուած 2րդ Էջէն
րեն, իր պարտականութիւնն է արգելք հանդիսանալ անոնց: Ան աւելցուց, որ նոյն միջոցառումները պիտի կիրարկուին, եթէ օրինակները նախկին երեսփո-նան կապիթէլ Մըրի խմբակին կը պատկանին: Մըր ընդգծեց, որ իր անձնական կեանքին մէջ կարե-ւոր որոշում մը առած է, դիտել տալով, որ «եղբարա-կան պատերազմը քանզեց ամբողջ Մեթընը եւ պիտի քան-զէ նաեւ Լիբանոնը», սակայն ինք պիտի արգիլէ զայն:

ԹԱՊԱՐԱ ԵՄ ԿԸ ԸՆԵՏԻ ԶԱՐԳԱՅՈՒՍՆԵՐՈՒՆ
Արդարագատութեան նախարար Պահիթ Թապպարա երէկ պահանջեց ընդհանուր դատախազութեան հսկել Պթըրինի գինեալ միջոցակցի հետաքննութեանց: Այս գծով աւ հեռաձայնային հաղորդակցութիւն մը ունեցաւ ընդհանուր դատախազ Ատնան Ատտուֆի հետ եւ իմացաւ, որ ընդհանուր դատախազութիւնը Պթըրի-նի միջոցակցի մասին ոչ մէկ տեղեկութիւն ստացած է մինչեւ Շաբաթ ուշ երեկոյեան: Թապպարա հեռաձայնային հաղորդակցութիւն մը ունեցաւ նաեւ երեսփոխան Նեպիլ Լահուտի հետ, որուն ըսաւ, թէ իբրեւ արդարագատութեան նախարար հա-ղորդագրութիւններ չի կրնար հրապարակել, սակայն նախանձախնդիր է միջոցակցի կապուած բոլոր իր-ականութիւններու յայտնաբերումին:

ՀԻՒՄԻՍԱՅԻՆ ԵՒ ՀԱՐԱՄԱՅԻՆ
ՔՈՐԵԱՆԵՐ ԱՆՋԱՏԱԲԱՐ
ՆՇԵՑԻՆ ԶԻՆԱԴԱԴԱՐԻ
50ՐԴ ՏԱՐԵԴԱՐՁԸ

ՓՆՍՄՈՒՆՃՈՄ, (ՔՈՐԵԱ), 27 (ԱՅՓ).- Քորեա-կան թերակղզիին վրայ գտնուող Պաղ Պատե-րակ միջոցին սահմանը Կիրակի օր թատերա-բեմ դարձաւ յատուկ հանդիսութեան մը՝ քորեա-կան պատերազմին վիճադարի համաձայնու-թեան 50րդ տարեդարձը նշելու համար:

27 Յուլիս 1953ին պէքերը լռեցին՝ վիճադարի համաձայնութեամբ, սակայն հակամար-տութիւնները պաշտօնապէս բնաւ ալ վերջ չգտան:

Պատերազմի սպառնալիքը վերայայտնուե-ցաւ անցնող քանի մը ամիսներուն՝ Հիւսիսային Քորեայի կորիկային պէքերու ծրագիրին առնչ-չուող տագնապի մը ընթացքին:

Փանմունճումը կը գտնուի վիճուորական բա-ժանումի գծին վրայ, որ ապակիւնուած գօտիին (Տի. Էմ. Էտ) կեդրոնէն կ'անցնի: Այդ գօտին համայնավար Հիւսիսային Քորեան դրամատի-րական Հարաւային Քորեայէն կը բաժնէ:

Շուրջ 2500 անձեր, որոնց կարգին ամերիկե-կան զլխաւորութեամբ ՄԱԿի 16 երկիրներէն 900 վեթերաններ, ներկայ գտնուած են հանդիսու-թեան, կոր Հիւ. Քորեա նկարագրած է իբրեւ «շատ վտանգաւոր արարք մը», այնպիսի պահու մը երբ շատ աւելի աւերիչ պատերազմի մը վտանգը ի յայտ կու գայ:

Կորիկային տագնապը ծայր տուած էր 9 ամիս առաջ, երբ Ուշինկըն յայտնած էր, թէ Հիւսի-սային Քորեա խոստովանած է, որ կորիկային պէքերու գաղտնի ծրագիր մը մշակած է՝ բռնա-բարելոյ 1994ի համաձայնագիրը:

Հիւ. Քորեա իրարու դէմ չ'արձակելու առնչ-չուող համաձայնութիւն մը եւ Ուշինկընի հետ ուղղակի բանակցութիւններ պահանջած է, մինչ Մ. Նահանգներ բազմակողմանի բանակցու-թիւններ կ'ուզեն՝ կորիկային սպառնալիքի հար-ցը լուծելու համար:

Հար. Քորեայի նախագահ Ռոհ Մու - Հիւն իր խօսքին մէջ ըսած է, թէ կորիկային տագնապին վերջ տալը ամէնէն անմիջական հարցն է, որ պէտք է լուծուի:

Նոր Աեյանայի վարչապետ Հելըն Քլարք Փանմունճումի հանդիսութեան զլխաւոր խօսքը արտասանած է, շեշտելով, որ Հիւ. Քորեա պէտք է հրաժարի «կորիկային պէքերէ եւ հաւանա-կան բնաջնջումի այլ պէքերէ»:

Մինչ այդ, Հիւ. Քորեայի մէջ, վիճադարի օրը կը տօնախմբուի իբրեւ յաղթանակի օր՝ «Հայ-րենիքի Ապստարութեան Պատերազմին մէջ»:

Տօնախմբութիւններ տեղի ունեցած են երկ-րին տարածքին, մինչ պետական լրատու աղ-բիւրներ պոչուցուցած են նոր պատերազմէ մը:

Զինադարձը բնաւ չէ փոխարինուած իս-ղադութեան համաձայնագիրով մը: Երկու Քո-րեաներուն միջեւ սահմանը, որ դէմ յանդիման կը գտնուի 37 հազար ամերիկեան եւ շուրջ 700 հազար հար. քորեական ուժերու Հիւ. Քորեայի 1,1 միլիոն վիճուոր հաշուող ուժերը, աշխարհի ամէնէն վտանգաւոր կետերէն մէկը կը նկատուի:

Երեք տարուան քորեական պատերազմին 4 միլիոն Կոհ՝ մեծամասնութեամբ քաղաքային-ներ, արձանագրուած է:

Advertisement for AFHIL medical equipment. Includes text: «ԱՅԿԻԼ AFHIL ԲԺՇԿԱԿԱՆ ՏՆԱՅԻՆ ՍԱՐՔԵՐՈՒ ՄՊԱՍԱՐԿՈՒԹԻՆ» and a list of services: AT HOME • Wheelchair • Walker • Electric Bed • Manual Bed • Water Mattress • Cans • Sticks • Serum Tripod • Walking Frame. Also includes: RENT AND SALE, HOME MEDICAL EQUIPMENT SERVICES, and contact info: 9ՈՒՏԱՅԻՆ «ԱՐԻՆ» ՍԵՆՁԸՐ ԳՐԱՍԵՆԱԿ՝ ԱՅԿԻԼ, ԱՅԿՏԻ ԶԵԼԵ, Բ. ՅԱՐԿ (ԵՄ. 001) 242553/7. NO MATTER WHAT YOU NEED... OR WHERE YOU NEED.